

ՄԱՍԻՍ

Շ Ա Ր Ա Թ Ա Թ Ե Ր Թ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

55^{րդ} ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 16

10 ՅՈՒՆԻՍ 1906

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օրուան նամակներ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
Կոնֆուռներուն օտուշը (Վերջին խօսք) Ռ. Յ. ՊԷՐՊԷՐՆԱՆ
Մոռնալ (Քանասեղծութիւն) Ժ. ՍԱՅՄԱՆԵԱՆ
Մովր ԵՒ. ԳՕԼԱՆՃԵԱՆ
Հայերին (Կոյր աղջկան մը նամակները) ԼԵՕՆ ԼԵՍԲԷ

Ներկու ռոմանտներ ՏԻԿԻՆ ԷՏՄՕՆ ՌՕՍԹԱՆԷ ԵՒ Ա. ՌԷՆԱՆԷ

(Լուսնային պայծ ջուրիւն ԵՒ ճաբանական ոքերգ)

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագիւնն է Կ. Պոլսոյ համար հառտուն դրօ. ԵՒ գաւառներուն համար յիսուն դրօ., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանք կամ 5 բուլլի: Թղթատարական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու:

Ձի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայմաններով:

Ձեռքէ կը ծԱԽՈՒԻ ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليهده غلطهده (ماسيس) غزتهسى ادارهسى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Հալաքիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Ծարճակահանութիւն

Թէլը, որ այսօր գրեթէ բոլոր մարդ-
վերդաց գլխաւոր ըմպելիէն դարձած է,
այնքան բաղմամբիւ անհոգեմբ ունի որ,
արդարեւ գործածողներուն համար բաւա-
կան դժուար է լաւ ընտրութիւն մը ընել:
Այդ անհոգեմբ համար նշանաւոր են
իրար անորոշեալ եւ քաղցրաբոյր, սմանք
ու թէեւ նոյնքան անբարեկիւր համ ու հոտ
լունին, գերազանց են սակայն իրար կող-
դուրիչ եւ զօրացուցիչ. վերջապէս իւրա-
քանիւր թէյ իր ուրոյն յատկութիւններն
ունի որոնք զինքը կը զանազանեն ու-
րիշ անհոգեմբ:



Սակայն կայ թէյ մը, որ
այդ յատկութեանց մէջէն
կարեւորները կը միացնէ իր
վրայ, այսինքն՝ գոյն, համ-
հոտ եւ մանաւանդ կող-
դուրիչ եւ զօրացուցիչ ան-
շուշտակաւ ազդեցութիւն
մը, եւ այդ թէյն է ճաքո-
նի քիլը, որ այդ յատկու-

թեանց շնորհիւ կը յարմարի մէջն աւարի-
քի ու կազմութեան, մէջն կլիմայի եւ
եղանակի եւ մէջն ճաշակի:

Յալբուրեան եւ Իսաղուլեան քիլի մեծ
վաճառատունը, իր բաղմամբիւ յաճախո-
ղաց ծառայութիւն մը մատուցանելու հա-
մար, այս անգամ մեծաքանակ ներածած
է ճաքոնի զուտ թէյ մասնաւոր եւ
գեղեցիկ անգիրքով ու կը հրաւիրէ օգ-
տուիլ այս աւիթէն բոլոր անոնք, որ կը
թափաքին անհոգեմբ թէյ մը

Համով, հոտով, առողջապահիկ եւ
կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկա-
կան, չինական, Սէյլան եւ ծովային մի-
նչաւ անհոգեմբ թէյեր:

Ուտագրութիւն մարգարի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբուժ եւ կնի-
աբան (gynécologue), Տօքթօր Էմիրզէ
որ 15 տարեան գործունէութեամբը մեծ
համբաւ ստացած է, կը ծանուցանէ յար-
գոյ յաճախողներուն թէ բնական
փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18:
Բաց ի վերայիցայ իւր մասնագիտութենէ
կը բուժէ նաեւ նորագոյն մէթոսներով
լղային եւ հագեկան ու երեւակայական
մէջն անհոգեմբ հիւանդութիւնները, ինչպէս
նէօրոսթէնի եւ tic անուանուած աչքի
երեսի եւ ուսերու ագեղ եւ ակամայ
չարտումները եւ դաշտանի դողաբուժ
մատչելի եղած լղային խռովումները եւ
երիտասարդական մօլիքները, ինչպէս
նաեւ գինեմօլիքը, մօրիֆնամօլիքը եւ այլն:
Կիրառելիներէն զառ մէջն օր կէսօրէն
սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կըն-
դունի, եւ ուրբաթ օրերը ձրիաբար կը
շարժանէ վկայեալ աղքատները: 6 — 10

ՍԻՆԿԻՐԻ գեղարուեստական Կրդ Յու-
ցանդէսը բացուած է Բերայի ընդհ. Տնո-
րէնութեան սրահներուն մէջ, Պօն-Մ արշէի
դիմաց: Յուցանդէսը մէջն օր բաց է եւ
մուտքը ազատ:

Զ. Տ. Ս. ՓԱՓԱՋԵԱՆԻ երկու կարեւոր
հրատարակութիւնները. — Գործնական Բա-
նաբան (հայերէն անգլիէրէն) որ կը պա-
րունակէ 40,000է աւելի բառեր, ասու-
թիւններ եւ ոճեր: — Դին լաթակազմին՝ 35
ղր.: — Նոյն հեղինակէն Չորեկեղուեան խօ-
սակցութիւն (հայ., գաղղ., անգլ., գերմ.)
բաժնուած երեք մասերու, բառադիտու-
թիւն, խօսակցութիւններ, նամականի: —
Դին լաթակազմին՝ 12 լղր.: — Վարժարանաց
համար մասնաւոր գեղչ:

ԲՈՂՈՐ ԵՐԱԽԱՅՔ ԵԿԹԱՅ ԿԸ ՀԱՆԵՆ

Եթիկայ որոշեալ ժամանակի մը մէջ տեղի կունենայ, սակայն անոնցմէ շատերը՝ սաստիկ ցաւօք և անհանգստութեամբ կը հանեն: Ուստի պէտք է տրուիլ մանուկներուն,



SCOTT'S EMULSION

որնոր ակոյայ հանած ատեննին՝ բոլոր ցաւերէ և աղետներէ ղանոնք կը փրկէ:

ԸՍԳՕԹԻ ԲԱՂԱԳՐՈՒԹԻՈՒՆ

տղայական վիշտերու համար՝ շատ կարևոր տղայական դեղ մըն է. անոնց կատարեալ առողջութիւն կուտայ և զանօնք նոյն վիճակի մէջ կը պահէ: Թող Ձեր զաւակները առողջ և զօրաւոր մեծնան շնորհիւ:

ԸՍԳՕԹԻ ԲԱՂԱԳՐՈՒԹԻՈՒՆ

Հեշերու վրայ ասոր ուշա-
դրութիւն ընել պէտք է:

Բոլոր բեղաւորները և բեղաւորները կը քննեն:

A LA BRODEUSE AU FIL D'OR



MARQUE DÉPOSÉE
FONDÉE EN 1888

ԱՐԹԱՔԻ Ա. ԽՈՒՄԱՐԵԱՆ

(Ա Ս Ե Ղ Ն Ա Գ Ո Ր Ծ):

Մեծ Շուկայ Գալփագեքլար Նուրի Օսմանի
Թիւ 5 և 11

Աս դուք մը մեծ վաճառատնց մէջ կը գտնուի ճիշտ մթերք մը՝ մէկ տեսակ տեղեւորութեան և որդուզորդի վերաբերեալ նիւթերու, վերջին նորաձեւութեանը համաձայն: Այս բոլորն կը հասնուի տեսնելով Բորքի տաղնակաւ քիչ քիչ քանակներու ապ

րանքներ, դառաօնէ, ֆուրգէ, չիլի. վաճառատն գլխաւոր ապաւան նիւթը եղալ D. M. G. Նիւզ մեաքս ու յօթօն, ֆիլի, ֆոնէլայի, քարգի և դառափի բուրգեր, կապտան, սըրմա, փուլ և Բրթր եւալլէ. ինչպէս նաեւ օթլալ, Բաւիլ, և ասոնց վրայ կատարուած ճաշկաւոր տեղեւորութիւններ, մեծ ու փոքր ծաւալով:

ՕժիՏԻ համար կ'ընդունուին միջին տեւողութեամբ յաճախարարութիւններ նորարարութեան տեղեւորութեան: ԲԱՌՏԻՆՍԻՆԻՆԻ ճիւղէն դառ, ասոնց երկու վաճառատնները կը հալթալթեն նաեւ ԲԻՅՍՍ ՏԱՅՄԸՆՏ ծանօթ վաճառատն ապրանքներէն գեղարդէններ օգիւղէններ և որդուզորդի ուրիշ տարրեր, իրաւունքի յարեւմտեան:

Ատեղեւորութեան և պատշաճի մէջ ինչպէս ժամանակէն գտնուի մը միւս պատրաստ կը գտնուի: Վարժարանաց գէլեւմէն, և համար մասնաւոր զեղչ կ'ըլլուի: Ինչպէս որդէն բոլոր գիւղերը շէնքաւոր:

ՄԱՍԻՆ

55^{րդ} ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 16

10 ՅՈՒՆԻՍ 1906

ՕՐՈՒԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ

ԱՌԱՋԱՐԿ ՄԸ

Հակալքողական պայքարը, որ Մասիսի միջոցաւ և մեր բոլոր թերթերուն փոյթեւումնդն մասնակցութեամբ բացուեցաւ Յովհաննէս էֆ. Թաւադեանի կողմէ, գրեթէ տարի մը առաջ, օրուան հետաքրքրութիւն մը առթելու և մրցանակներուն բաշխումէն ետքը մոռցուելու սահմանուած չէ եղեր: Հաճոյքով կը հաստատենք այս իրողութիւնը, կարդալով յունիս 2ի Արեւելի մէջ Մ. Նաթանեան էֆ.ի նախայօդուածը որ կը շնչոյն նոյն լրագրի աշխատակիցներէն մէկուն հրատարակած նամակը, — ալքովամութեան դէմ գրուած լաւագոյն յօդուածները գրքոյկի մը մէջ ամփոփել և հասարակութեան ամէն խաւերուն մէջ տարածել առաջարկող:

Ահա՛ գաղափար մը նոյնքան հանրագոտ որքան գործնական, որուն վրայ մեր կողմէ ալ խորհրդածութիւններ աւելցնել աւելորդ կը համարինք: Արդէն Նաթանեան էֆ.ն ամփոփ՝ բայց յօտակ ու գեղեցիկ կերպով պարզած է այս առաջարկին բարեբար հանգամանքը, յիշեցնելով թէ քարոզներու մրցումին առթիւ ալ այս ընթացքին հետեւեցաւ անոր հաստատիչը, իր ծախքով հրատարակել տալով զանոնք առանձին հատորով մը, — Քառոզգիւր, — և աւելցնելով իրաւամբ թէ «Թաւադեան էֆ.ի ոգիին ու սովորութեան անհամաձայն բան մը չէ, ուրիմն, այս առաջարկը զոր կը կրկնենք, վստահ՝ իր բարեսիրութեան և օգտամատոյց ըլլալու նախանձախնդրութեան վրայ»:

ՆՈՐ ԴԻՐՔՆԵՐ

Սպասելով այս գաղափարին գտնելիք ընդունելութեանը, գրական ու բանաստեղծական հատորիկներու յաջորդականութիւն մը կ'ողջունենք գարնան սկիզբէն ի վեր, իբրեւ եղանակին մտաւորական ծաղիկները: Առաջին Սերին յաջորդեց Նեկուեհը, և այս վերջինին վրայ հաջիւ դեռ խօսելու առիթ ունեցած՝ կընդունինք Նեհաւիստի, զրական ու իմաստասիրական խոհերու, տպաւորութիւններու, նկարագրականներու փունջ մը, Տիրան Զրաքեանէ (Ինքա), Ռ. Յ. Պէրպէրեանի ընդարձակ մէկ յառաջարանովը օժտուած:

«Ինչ որ ալ ըսուի, քու մէջդ բանաստեղծ մը կայ, ինտրա՛, — կը գրէ ուսուցչապետը իր նախկին սանին, — նորը զգայութիւններով ու վեհ խոյանքով բանաստեղծ մը, ու երկիւ՛ թէեւ արձակ՝ ամբողջ քերթուած մ'է գեղեցիկին, վսեմին, լոյսին, սիրոյն, անհունին, Աստուծոյ նուիրուած: Այս գաղափարներուն, այս ըմբռնումներուն և անոնց խորհրդանշաններուն առջեւ հոգիւ համակ թրթուում, հեւք, բորբոք, հրճուանք, երազ, սարսուռ ու երգ է: Խաժալանջ Սեւ-Մովսէս ու կապոյտ երկնակամարը իրենց անձիւր տարածութեամբ անսահմանութեան տեսիլովն զքեզ կը գինովցնեն. վարդ-շուշան առաւօտները և ստուերոտ երեկոյները ծունկի կը դնեն զքեզ այգին ու վերջալուսին շքեղութիւններուն առջեւ...»: Ու քիչ մը վերջը, բուն իսկ գիրքը կը սահմանէ, — միշտ Պէրպէրեան

էֆէնտին է խօսողը — սա տողերով. «Գիրքդ մեծաւ մասամբ չարք մ'է արդէն պատկերներու զոր կը ներշնչեն քեզ դեռ կարճ րայց արդէն բաւական արկածալից ու տարուբեր կեանքիդ յուշերը որք գիրար կը ծնցնեն. սակայն յիշատակները միայն երեւակայութեանդ ու սրտիդ ցունց չ'են տար այլ իմաստասիրական խոկմունքդ կը գրգռեն անհատական և ընկերական կեանքի երեւոյթներուն վրայ, ու մտօք կը սուզիս ու անոնց կազմած կնճիռներուն մէջ և քեզ հետ կը քաշես կը տանիս ընթերցողիդ միտքը»: Յառաջաբանին կը յաջորդէ Ծանօթութիւն մը, հեղինակին կողմէ գրուած, որ հարկ կը համարի յայտնել թէ գրքին նիւթերը առնուած են գլխաւորաբար իր երիտասարդութեան այն փոքր մասէն որ 1881էն մինչեւ 1889 կը տեւէ և որուն մէջ ունեցած է «քիչ շատ վիպային ու զգացումներով հոծ կեանք մը»: Հետեւաբար, կ'աւելցնէ համեստօրէն, այս կրկին թերութեանց մէկ մասը վերագրելի է հեղինակին այն տարիքին ուր իր գրքին նիւթերն զգաց և ի գիր առաւ զանոնք:

Հազիւ ստացած ու թղթատած Նեքաւսաբը, — որ անշուշտ Գրախօսականի մը նիւթ պիտի ըլլայ այս էջերուն մէջ ալ, — առաջին տպաւորութիւննիս համակրակտն կըլլայ երիտասարդ հեղինակին նկատմամբ՝ իր անդրանիկ գործին հրատարակութեանը առթիւ: Տարիներէ ի վեր լսած էինք թէ Տիրան Զրաքեան ձեռնարկած էր այս գրքին, սրտով ու հոգիով փարած անոր, և անոր տպագրութեան աւարտումը ու հրապարակումը մտաւորական անփութարինելի վայելք մը նկատած իրեն համար: Կը ժաղթենք որ յուսախար չըլլայ ու իր գիրքը՝ գտնէ արժանաւոր ընդունելութիւնը: Առաջին գիրք մը՝ առաջին սիրոյ մը չափ անոյշ է միշտ հեղինակի մը համար. երբ մանաւանդ երիտասարդ է ան դեռ ու գործն ալ գրական, այսինքն սրտէն ու մտքէն բղխած միանգամայն: Այս տպաւորութիւնը անգամ մըն ալ կրեց, այս տողերը գրողը, առջի շրջանմարելով Մատթէոսեան Տպարանի Տնօրէն

նութեան գրասենեակին մէջ Պարոն մը ու Տիկին մը որոնք, լայն սեղանի մը առջեւ հակած, գեղակաղմ փոքրիկ գիրքերու դէպ մը դասաւորելու զբաղած էին, Զօնք, Հասցէներ գրելով: «Ինտրա»ն ու իր կեանքի ընկերուհին էին որոնք իրենց մտքին երկունքը, Նեքաւսաբը, հրապարակ կը հանէին գուրգուրանքով մը, եռանդով մը որ շատ անգամ աւելի՛ տաք է մամուլին տակէն նոր դուրս եկած, խոնաւ էջերով ու մեկանի հոտը ըուրող գրքի մը վրայ՝ քան ուրիշ որ եւ է երկունքի, ձեռարուեստի արտադրութեան համար: Ո՞ր հեղինակը, որ գրագէտն է ան որ չէ ըմբոյխած՝ տպագրական մեկանին այդ հոտը, դեռ չչորցած թերթերուն այդ խոնաւութիւնը, ու չէ զգլխած անոնցմով:

ՌԱՆՍՍԵՏԵՂՎՈՒԹԵԱՆՑ ԵՈՒՐՁԸ

Մ. Ա. Պարսամեան ալ կը պատրաստուի բանաստեղծական... երկու հատոր մէկանց հրատարակել, որոնց մէկը մամուլի ներքեւ է արդէն, —ինչ որ կը հաստատէ թէ իր տառաւորներու առաջին հատորիկը, Անգլաֆը, յուսախար չէ թողուցած զինքը՝ գրականապէս ու նիւթապէս: Երեւոյթը յատկանշական է և կը զօրէ զմեզ հեռացնելու մեր մէջ արմատացած այն դադափարէն, ի մասին հրատարակական գործին, թէ ինչ որ դասագիրք չէ՝ ոչ ալ գործի, արհեստի, առուտութի վերաբերեալ հրատարակութիւն մը, նախաձեռնութեամբ է գրավաճառներու դարակնեւուն փոշիին տակը թաղուելու և օրին մէկը փերեղակին խանութը փոխադրուելու, իրեն անպէտ թուիլի գործածուելու համար: Վերջին տարին: Ես իրարու յաջորդող բանաստեղծական ու գրական հատորներուն արագ սպառումը ու նորագոյն հատորներու հետզհետէ մամուլին յանձնուիլը ասոր հակառակ կը կը հաստատեն, միեւնոյն ատեն հաստատելով, բնականաբար, ճաշակներու ազնուացում մը ու գրասիրական աւելի տաք վերաբերում մը՝ ընթերցող հասարակութեան կողմէ:

ԽՄԱՆԳՐԱԿԱՆ ՆՈՐԵՐ

Ականակուռ Իֆթիխար պատուանշան չընորհուեցաւ Կայս. Անձնական Գանձուն նախարար Վսեմ. Սաքըզ Յովհաննէս էֆ.ի որ Կայս. այս բարձր գնահատման արժանանալուն բերկրալի առիթովը ընդունեց յամենուս խնդակցական շնորհաւորութիւններ:

* * Ս. Էջմիածնէն կը հաղորդեն թէ Ս. Հայրապետը յառաջիկայ շաբթու Թիֆլիզ պիտի երթայ և անկէ՝ օգտփոխութեան համար՝ Ապասթուման որ Կովկասի հովասուն ամարանոցներէն մէկն է և հանքային կադուերիչ ջերմուկներ ունի:

* * Մայրաքաղաքիս ազգ. նախակրթարանաց իջնանաւարտներու Կրօնի և Բարոյագիտութեան քննութիւնները կատարելու

համար՝ Ս. Պատրիարք Հօր կողմէ ներկայացուցիչ կարգուած են Տ. Զաւէն Մ. Վ. Եղիաեան և Տ. Դեռնդ Վ. Դուրեան:

* * Ղալաթիոյ եկեղեցիին արտաքին մասը, ինչպէս նաեւ Թաղ. Խորհրդարանը, դպրոցը, և յարակից բաժանումները գունաթափ եղած ըլլալով, ինամակալութեան ատենապետ Յակոբ էֆ. Էսաեան ազնուաբար իր կողմէ նուիրեր է պէտք եղած բաւոր ներկերը, որպէս զի վայելուչ վիճակի մը մէջ դրուին պատերը ու ներկուին: — Կեդր. վարժարանի իջնանաւարտ կարգին քննութիւնները կը կատարուին՝ եկեղեցական եւ աշխարհական ծանօթ անձնաւորութեանց ներկայութեամբ: Յառաջիկայ երկուշաբթի, միջօրէնէն յետոյ, պիտի կատարուին հայերէն լեզուի քննութիւնները՝ գրաւար ու աշխարհաբար:

Մ Ո Ռ Ն Ա Լ

Ս Ի Բ Ե Բ Գ

Մոռացումի մը մէջ անծայր, անյատակ
Թաղել կ'ուզեմ հիմա կեանքիս հատորին
Հին էջերը՝ գծագծուած օրը օրին՝
Դեռ չզգացած սիրոյ բոցը լանջքիս տակ:

Այդ էջերը հիմա ինծի անիմաստ,
Տղու ձեռքի մրոտումներ կը թուին,
Ու կ'ուզեմ որ երթան թաղուին, կորսուին,
Մոռացումի քօղին ներքեւ թանձր ու հաստ:

Յիշողութեանս թոյրերն ամէն խիտ ու հոծ
Ջնջել կ'ուզեմ, այդ էջն ընել ձեպ ձերմակ,
Եւ գրել հոն, ձիւն ամպերու մէջ համակ,
Բու անունըդ լոկ, տառերով ոսկեղօծ:

Մոռնալ կ'ուզեմ գիտակցութիւնը կեանքիս
Տափակ աշխարհը չեմ ուզեր դիտել ա՛լ,
Մոռնալ ապրիւս, մոռնալ ամէն բան մոռնալ
Եւ միմիայն սիրելիս յիշել քեզ, հոգիս:

ՅԱԳ ՍԱՅԱՊԱԼԵԱՆ

ԿՈՆՔՈՒՆԵՐՈՒՆ ՇՈՒՐՋԸ

Վ Ե Ր Ջ Ի Ն Խ Օ Ս Ի Յ

Ըստ որում Մասիսի արժանայարգ Խըմ- բագրուծիւնը այս խնդրոյն վրայ վերջին խօսք մը ըսելու իրաւունքը կուտայ ինձ, յառաջ քան փակելը վիճաբանութիւն մը որ շատ երկարեցաւ, ներուի ինձ ցոյց տալ թէ — ըստ որում վերջի վերջոյ յանգեցանք ներդաշնակութեան խնդրոյ մը, չնորհիւ Դր. Մալխասի վիճաբանական ռազմագի- տութեան հնարքներուն որք, հակառակ իր ինքնահաճ հիացումներուն, ուրիշ բաներ չեն բայց եթէ ամէն ճարահատներուն կարծեցեալ վարպետութիւնները, այն է խնդիր փոխել, ծակէ ծակ փախիլ, գործին չեկած փաստե- րու և ցոյց տրուած անհերքելի սխալներու առջեւ սուտխուլ ըլլալ, բնագիր և վկայու- թիւն խեղաթիւրել, տարբեր ընդդիմախօս- ները մէկի վերածել, եղածը չեղած համարիլ, աննպաստ առարկութեանց ու որակմանց դէմ անդադրութիւն կեղծել և նոյն իսկ անոնց վերաւորիչ տարափը իբրեւ զովարար անձր- ընդունելու պիտակ ստորիկութեամբ մը յո- խորտալ, իր ամէն կողմէ նետահար խոցող կուրծքը տնկել ուռեցնել միշտ ու ձեռքն անոր զարնելով ապշեցուցիչ անձնագոյնու- թեամբ մը ըսել և պնդել թէ ինքն ու իր գործը անստգիւտ ու անհաւասարելի են, ևն., — հնարքներ որոց բոլոր տխուր փառքը յօժարակամ կը թողուցնէ իրեն ի վայելումն, — ներուի ինձ, կ'ըսեմ, ցոյց տալ մի քանի բառերով և օրինակներով թէ Կոնքուռնե- րուն վերագրած և իրեն իբր ամուր ապաս- տանի ըրած «աններդաշնակութիւնները», իբ- րեւ թէ անոնց կողմէ կամաւորապէս ի գործ դրուած, սխալ ու երեւակայական են և պարզապէս կ'ապացուցանեն թէ ինք չի հասկանար այդ դասական ըսած ներդաշ- նակութեան ինչ ըլլալը, ինչպէս որ անոր հակադրած «նուագակցութեան» ալ իմաստը կարող չեղաւ երեք իր ընթերցողներուն բացատրել:

«Պէտք եղածը քաղեցինք, կ'ըսէ հպար- տօրէն, Ժիւլ Լըմէզոէ, չափաւոր, պարտ ու պատշաճ և ջախջախիչ կերպով», իբրեւ թէ հեղինակէ մը քաղուած մը ընելն ալ պատուոյ առիթ մը ըլլար, մանաւանդ երբ այդ քաղուածը կը խեղաթիւրէ մարդ դիտ- մամբ, ինչպէս երբ հեղինակին en un sens (կերպիւ իւրիք) վերապահութեան բառերը կը յապաւէ ու certaines petites règles d'euphonie են. բառերը կը թարգմանէ «տեսակ տեսակ կանոններ» ըսելով, փո- խանակ «ինչ ինչ փոքրիկ կանոններ» թարգ- մանելու, փութիկը բոլորովին ի բաց նետե- լով իբրեւ վնասակար տարր մը և իճ իճին տեղ սեսսկ սեսսկ բառերը գործածելով, որպէս զի գործը մեծցնէ ու ընթերցողը խաբէ հեղինակին ճշմարիտ մտքին վրայ զոր բոլորովին իր ուղածին պէս չի գտներ ան- տարակոյս:

Անկէ վերջը Դր. Մալխաս կ'անցնի (տե՛ս Մասիս, 6 Մայիս, 1906), իւր իսկ անձնա- կան փորձառութեանց ու ծանօթութեանց, անոնցմով լուսաբանելու համար խնդիրը ու իր դատը ամուր հիմերու վրայ զետեղելու: «Հետեւեալ օրինակները, կ'ըսէ, զոր կը հաւաքենք Ռիւ'է Մօքքուեճէ, դէ՛մ են ներ- դաշնակութեան, արդիւնք չեն հեղինակաց անմտադրութեանը, այլ սովորութեանը»: Եւ ահա՛ այդ անձնական փաստերը, անոնց կցելով անհիշապէս մեր պատասխանները, էջ 297, հեղինակները (Կոնքուռնեքը) տասը տողի մէջ վեց անգամ գործածեր են rose և rosier բառերը, և էջ 301, «չորս տողի մէջ իրարու խիստ մօտ դրացի չորս բառեր կը վերջանան entով, և են՝ chan- gement, lentement, attachement, com- mencement» — Ֆէնըլոն, որ դասականաց մէջ ամենէն ներդաշնակներէն մին համար- ուած է, Télémaqueի մէջ երեք նոյն վեր- ջաւորութիւնը ունեցող բառեր ո՛չ թէ վեց կամ չորս տողերու մէջ, այլ նոյն տողին վրայ քով քովի շարած է. «Le figuier, l'olivier, le grenadier, et tous les autres arbres ևն.» Նոյն գործոյն մէջ մէկ տողի մէջ of ձայնը կրկնած է երեք անգամ,

«cette grotte était taillée dans le roc, en voûte pleine de rocaillies et de coquilles»: Հոն դարձեալ, fh, fp, fo, ա ձայներուն մօտէ մօտ կը հանդիպինք սա խօսքին մէջ. «O vous, qui que vous soyez, mortelle ou déesse (quoique à vous voir on ne puisse vous prendre que pour une divinité): Պոսիւէ, ուրիշ դասական մը, ան ձայնը երկու տողի մէջ չորս անգամ կը կրկնէ. «Ma vie est de quatre-vingts ans tout au plus, prenons-en cent; qu'il y a eu de temps où je n'étais pas!»: Ուրեմն նոյն ձայնին մօտէ մօտ կրկնութիւնը դասականաց ծանօթ ներդաշնակութեան եղծիչ բան մը չի համարուիր եղեր, ինչո՞ւ ուրեմն կոնքուռներուն համար այդքան խստապահանջ ըլլանք:

Էջ 306. «Դր. Մալխաս մատնանի կ'ընէ մեզ իրարու յաջորդող երկու անկախ և կարճ ֆռաղներ որք աններդաշնակ աւարտներ (finale) ունին», և են ասոնք. «Près d'elle, il avait froid maintenant. C'était comme si la maladie lui volait tous les jours un peu du cœur de son enfant.» Մինչ կը փնտռեմ աններդաշնակութիւնը անոնց մէջ, ահա՛ կ'ըսէ մեզ Դր. Մալխաս, «Մաքրասէր դասականը պիտի գրած ըլլար. Près d'elle maintenant... ևն.» Բայց ինչո՞ւ maintenant մակբայը հանել իր տեղէն ուր աղէկ է ու ճիշդ դասականաց համեմատ է, որք յեղաշրջումները (inversion) չափին սիրեր, ու բերել դնել près d'elle-ն անմիջապէս յետոյ՝ խօսքին աւարտը կտրատ բան մը բնելով, որ ճիշդ այն ատեն իրեն ի վկայութիւն բերած Ալպայային պատուէրին հակառակ կը լինէր, անխնամ քողով աւարտք, զի ինչ է աւարտներուն այդ խնամքը՝ զոր կը յանձնարարէ Ալպալա իրրեւ պայման երաժշտական կատարել ազդեցութեան ըստացման, եթէ ոչ խօսքին աւարտումը «ամենէն ընդարձակ անգամներովն ու ամենէն հնչուն բառերովը», ինչպէս կը գրէ Մ. Ա. Հանրի իր դասագրքին մէջ (Cours pratique et raisonné de style et de composition), և ինչպէս կը պատուիրեն ամէն զբաղիւմտ:

Թեան ուսուցիչք: Ուրեմն դասական ներդաշնակութեան կողմէ պակասաւոր դատուած այս խօսքերն ընդհակառակն կատարելապէս համաձայն են անոր պահանջման. վասն զի maintenant-ը կարճ ու կտրատ ձայն մը չէ: Ներդաշնակութեան սիրահար ու վարպետ Կիւսդավ Ֆլօպէռ ալ գրած է Մատմ Պօլառիի մէջ՝ էմմայի մահուան նկարագրութեան կարգին. «Son pouls inégal était presque insensible maintenant.» — maintenant-ը ճիշդ կոնքուռներուն պէս խօսքին վերջը ձգելով: Իսկ յայտնի է որ un peu du cœur de son enfant բառերը երկրորդ ֆռաղին՝ չէին կրնար tous les jours բառերէն առաջ անցնիլ իրրեւ խօսքին ընդարձակագոյն անդամը, որով անոնց խօսքին վերջը մնալն ալ կատարելապէս յարմար է դասական ներդաշնակութեան կանոններուն, ու Դր. Մալխաս, իրաւունք ունենալու համար իր կարծեցեալ ճաշակագիտական դատումներուն մէջ, յանիրաւի կ'ամբաստանէ զկոնքուռները իրրեւ դիտմամբ ու կամաւ անգոհող միշտ ճաշակի կանոնները: Իր ընտրած օրինակները իրեն դէմ կը դառնան դժբախտօրէն:

«Էջ 325, կը գրէ նա, երբ առարկայից գծագրութեանը վրայ կեդրոնացած է հեղինակներուն ուշադրութիւնը, այլեւս անփոյթ են ասոնք ներդաշնակութեան և իրարու ետեւ կը շարեն նմանաձայն վերջաւորութեամբ բառեր, «dénoués, des blés, des bluets.» Բայց ո՞ր ատենէն ի վեր նմանաձայն վերջաւորութեամբ բառերը բացարձակօրէն աններդաշնակ են. ուրեմն յանգաւոր ոտանաւորները պարտին աններդաշնակ համարուիլ, և թէեւ արձակն անուշտ պէտք չէ որ բոլորովին գրուի ոտանաւորի պէս, բայց վերջապէս անպատճառ աններդաշնակութիւն մը չի կազմեր արձակին մէջ ինչ որ գեղեցկութիւն մ'է ոտանաւորին մէջ: Ուրեմն մեր ամենէն ներդաշնակ արձակագիրներէն մին, Եղիա Տէմիրճիպալեան, խորթ ու աններդաշնակ է երբ կը գրէ, «Այլ վաղ սկսայ ճանաչել ու գնահատել իր (ներսէս Մեզ»

պուրեանի) գրական քաղաքն և տոհմասիրական եղանակը», իրարու հախալանք ընելով մեր ստորագծած երկու բառերը: «Վիսպատ ենք» բառերով սկսող ծանօթ գրական գոհար հատուածը ծանօթ մեծանուն գրողին՝ աններդաշնակութիւններ ու խորթութիւններ կը պարունակէ ուրեմն իր մէջ, վասն զի հոն կը կարգացուն հետեւեալ տողերը, ուր միեւնոյն յանգր Եւ չորս անգամ կուգայ հեղինակին գրչին տակ. «Հոն՝ ամպերուն հետ թխագոյն կ'որոտայ, հոս՝ դալարագեղ ծաղկասփիւռ խոտերուն եզերքը՝ մանուածապատ ման կուգայ, հոն կը փրփրայ, հոս կը փայլփլայ, ևն.»: Têlémachie սկզբնաւորութեան մէջ օա ծանօթ տողերը չեն պարունակեր նմանաձայն վերջաւորութիւններ, և սակայն ո՛վ աններդաշնակ գտեր է զանոնք կամ անոնց հեղինակը ներդաշնակութեան անփոյթ հռչակած. ընդհակառակը, և նոյն իսկ մեր Գր. Մալխաս էֆ.ն Ֆէնրլոնի գործը քանիցս իր գրուածներուն մէջ յիշած է իրրեւ դասական ներդաշնակութեան տիպար մը, ինչպէս որ է իրապէս: Ահա՛ այդ տողերը. «Les nymphes qui la servaient n'osaient lui parler; elle se promenait souvent seule sur les gazons fleuris dont un printemps éternel bordait son île.» Եւ ահաւասիկ երեքուկէս տողի մէջ նոյն է ձայնը հինգ անգամ կրկնուած: Եթէ այս նմանաձայնութիւնք արատ մը չեն բերեր Ֆէնրլոնի ոճին, ինչո՞ւ մեր բարեկամը նման պարագաները ա՛յնքան մեծ փաստ մը կը համարի, զԿոնքուռները ներդաշնակութեան ըմբոստ հռչակելու:

Կ'ըսէ թէ Կոնքուռներու Գերդաօհակութիւնը, «զոր իճֆ մինչև հիմայ չէ տեսած», պարտէր լուսաբանուիլ անոնց զաղիւրէն ընազրին ցուցմամբը (Մասիս, նոյն թիւ), և իր վերջին յօդուածին մէջ ալ (Մասիս, 20 Մայիս 1906) կը գրէ «Ընդդիմախօսներս... իրենց կարծիքը հաստատելու համար առաջ չբերին ու է փաստ, չցցուցին ամենափոքր վկայութիւն, չ'աջագրեցին եւ ոչ իսկ անճակարհ պարբերութիւն մը Կոնքուռներու

Ֆրանսերէն բնագրէն (*), ուրկէ տեսնուէր դասական ներդաշնակութեան մը գոյութեան ասպացոյցը», և այսպէս, գիտութեամբ մեղանչելով, կ'երեւի թէ միամիտ ու անմտադիր ընթերցողներու առջեւ յաղթութիւն մը — գէթ այս մասին — տարած ըլլալ կ'ուզէ երեւի, ստելով, ուրանալով: Բայց սուտին վրայ հիմնուած յաղթութիւնը քանի՞ խաբէական ու ողբալի է. միթէ իր աչքերը չտեսան Կոնքուռներու Charles Demailly գործէն մեր յառաջ բերած 19 տող հատուածը, (Մասիս, 29 ապրիլ 1906), որուն մէջ հորիզոնական գծերով պարբերութեանց անդամները արոհելով՝ ցոյց տուած էինք անոնց մէջ զգացուած երաժշտական թուականութիւնը: Եթէ հեղինակներուն բնագրէն տող մը յառաջ չբերինք, ուրեմն ինչո՞ւ կը պահանջէ նոյն կամ նման հատուածներու մասին «հեղինակաւոր քննադատներու անուններ, որոնք միեւնոյն երաժշտական թուականութիւնը նշմարած են անոնց մէջ», յաւելլով թէ «ուրախ պիտի ըլլայի կարգաւ լով բուն այդ քննադատներուն կարծիքը, կարենալ կատարեալ համոզում գոյացնելու համար»: Իր խօսքերը իրարու կը հակասեն, կը ստէ և իր սուտը իր խօսքովն իսկ կը յանդիմանուի. ասո՞նք են իր համբաւոր ռազմագիտական ճարտարութիւնները որոց վրայ պանծալու երեան ունէր Բիւզանդիոնի մէջ: Ինք իր իսկ անձնական ճաշակովը Կոնքուռներէն օրինակներ կը բերէ մեզ աններդաշնակութեան ու իր այս ըրածը իրաւացի ու բաւարար փաստ կը համարի, մինչդեռ նոյն բանը երբ մենք կ'ընենք հակառակին համար, չընդունիր. «պէտք չէ որ բառերու պակասութեան պատճառով, քննադատութիւն մը... անտանելի դառնայ» կը գոչէ հեղինակօրէն և քննադատներու կարծիքը կը պահանջէ: Օ՛հ, որքան պոռոտ ու անիրաւ գոչումներ: Ներդաշնակութիւնը զգայարանաց ուղղակի զգալի բան մ'է եւ գէթ կիրթ ականջներ պարտին զգալ զայն. մեր բարեկամը կ'ուզէ որ ու-

(*) Մենք կ'ստորագծենք:


մը ըսէ իրեն թէ լսածը ինչպիսի
այն է, անո՞յ է թէ խորթ. կ'երեւի թէ իր
գրած չաքարին համեալ ուրիշին հարցնե-
աւ սովոր է: Այդ՝ եթէ անկեղծ է՝ ինքնին
ստատովանիլ է ճաշակի անբաւական մշա-
կութիւն մը, և իցի՛ւ թէ բնաւ չփորձէր
ստատիլ իր վրայ. այն ատեն զերծ կը մնար
այն վրիպակ դատումներէն որոց մէջ ին-
քած ելած է ան սկիզբէն ի վեր:

Բայց ո՞չ ապաքէն քննադատներու կար-
իքներ ալ յառաջ բերինք, — Կիւսդավ
Պետուզէն որ վարպետներու «Հատընտիր
լիբրը» հրատարակած է և որ բաղդատելով
Ֆլօպէտի և Թէօֆիլ Կօթիէի հետ՝ քան
զայն աւելի դժուարահաճ ու անգոհ ցոյց
կուտայ արուեստագէտ-դարգէս եղբայր-
ները, և մերթ ա՛յնքան քուակացութիւն,
նամաշխութիւն, և երաժշտական քրթուում
կը գտնէ՝ իմաստից բարդութեան հետ միա-
պատ՝ անոնց արձակին մէջ, որ չի վարանիր
այդ պարագային մէջ «ամենաբարձր բանաս-
տեղութեան բարձրացած», տեսնելու զա-
նոնք, — և նոյն իսկ անոնց երէց եղբորմէն՝
Խոնէն որ կրտսերին ոճոյ կատարելութեան
մասնագետութիւնը կը պատմէր ու չարչարան-
քը «հո՛ս վերադիր մը փոխելու, հոն պար-
բերութեան մը մէջ կեռութիւն մը (rythme)
մացնելու, աւելի հեռուն ի նորոյ ձեւա-
կերպելու խօսքի դարձուած մը, ևն. » Արդ
մեր ստորագծած բառերուն մատնանշած
հանգամանքները ներդաշնակութեան, երա-
ժշտականութեան ըմբոստ ու անընտել ոգի՝
մը ցոյց. կուտան, թէ անոր հակառակը,
հաստատուած վկայութիւններով որք իրենց
մեծ արժէքն ունին, մին լինելով Կոնքուռ-
ներուն ամենէն ընտանի աշակերտին և միւ-
րը նոյն իսկ Կոնքուռի մը կարծիքն ու հա-
ւաստումը: Նոյն ինքն Կիւսդավ Ֆլօպէտ,
այդ դժուարահաճը, չէ՞ր գոչած խանդա-
վառ, յետ լսելու վարպետներուն մէկ գոր-
ծին ընթերցումը, «Յիսուս տարիէն ասիկայ
զպրոցներուն մէջ պիտի ուսանին:» Եթէ
Կոնքուռեան ոճը, Պ. Մալխասի կարծածին
պէս, անմասն է բոլորովին ներդաշնակու-
թիւնէ, հեղինակներուն ո՛չ անմատչելութեան

արդիւնք անփութութեամբն, այլ գիտակից
ուճակութեամբն, ինչո՞ւ այդ աններդաշնա-
կութեան մասին բնա՛ւ որոշ յիշատակու-
թիւն մը ու բա՛ւ մը իսկ չեն գրած Բօլ
Պուռժէ և Սէնդ-Պէօլ, որք երկայն էջեր
նուիրած են Կոնքուռներու գործին գնա-
հատման: Անոնք կը խօսին անոնց անսովոր
ու նորաստեղծ բառերուն, նկարչական մտա-
դրութիւններուն ու երանգական ճիգերուն,
բազմամասնեալ ու կոտորակուած պարբե-
րութիւններուն, գոյականացեալ ածական-
ներուն, յաճախադէպ յեղաշրջումներուն,
վերջապէս ոճոյ նորութեանց, անօրինակու-
թեանցն ու յանդգնութիւններուն վրայ, որք
առանձին դրոշմ մը կուտան անոնց գրելու
կերպին, բայց խօսքը չեն ըներ բնաւ անոնց
կամայ թէ ակամայ աններդաշնակութեանց,
ինչ որ անկարելի էր եթէ այդպիսի աչքի
զարնելիք հանգամանք մը ներկայացնէր հե-
ղինակներուն ոճը: Սէնդ-Պէօլ մինչեւ իսկ
կը մատնանշէ էջ մը՝ զոր իր սեռին մէջ
կատարեալ կը գտնէ. «Բա՛րձր կարգացէք,
լա՛ւ կարգացէք, կ'ըսէ, չեչտեցէ՛ք ու արո-
հեցէ՛ք մէն մի բառ, մէն մի անդամ խօս-
քի, ինչպէս Ժ. Ժ. Ռուսօ կ'ուղէր իր Պիգ-
մալիոցի մենախօսութեան համար, ու պի-
տի զգաք թէ ի՛նչ է գրուած նկարչականի
այս սեռին մէջ Պ. Պ. Կոնքուռներու ճար-
տարութիւնը: Եթէ Սէնդ-Պէօլի մատնանիշ
ըրած էջը ներդաշնակութեան թերութիւն-
ներ պարունակէր, նա կը յանձնարարէր
բարձր կարգալ, չեչտել, արոհել, գործո-
ղութիւններ որք ներդաշնակութեան թերու-
թիւնները առաւել ևս ի յայտ բերելու ու
հատուածը առաւել տգեղացնելու միայն
պիտի ծառայէին: Սակայն այս ամէնքը ո-
չինչ են Գր. Մալխասի համար. իրեն ի նը-
պաստ չեն, ապա ինչ որ ալ ըսես ու գրես՝
կարեւորութիւն չունին. ո՛չ կը լսէ, ո՛չ կը
կարդայ զանոնք. ինք միայն ժիւլ Լըմէդը
կը ճանչնայ որ իր ճաշակով, թերեւս խօստա-
դատ դասականութեան մը տեսակէտով,
ցոյց կուտայ աններդաշնակութեան պարա-
գաններ Կոնքուռներու ոճին մէջ, ինչ ինչ
կարեւոր վերապահումներով, սակայն, և

զգուշօրէն, առանց բացարձակ վճռի. և այս բաւ է Գր. Մալխասի համար՝ զայն մեծցնելով ու ալլանդակելով, իր մատը փաթթելու և, իրր թէ իր Քննադատներուն սխալն է գտեր, անտանելիօրէն կրկնելու, խորհունկ գիտնականի հեղնոտ ձեւերով յոխորտալու, աղմուկ յարուցանելու և թմբուկի խլացուցիչ գոռումներ որոտացնելու համար... օղին մէջ, որպէս զի յաջողի մտքերը հեռացնել իր թարգմանչական ձախողութեանց ու աւերներուն ամօթալի ու տխրալի տեսարանէն:

Բ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Գ Է Պ Ի Ծ Ո Վ Ա Փ

ԱՆՈՆՅ ՈՐ ԶԵՆ ՏԵՍԱԾ ԾՈՎԸ

Յաճախ, երբ մինակ կ'ըլլայի, մտածուիս ինքնավար գործունէութեան մէջ, գրեթէ առանց կենսորոշ զգայութեան մը. երբ օրը երկար կ'ըլլար ու տաքը, ջախջախիչ ընդարձակ ձանձրոյթի մը պէս, անշունչ անշունչ, կը ճնչէր տանիքներուն ու բոլոր շարժիլ ուզող կեանքին վրայ. երբ լռութիւնը ցորենարտերուն ու հունձքի բոլոր բանուկ պողոտաներուն վրայ՝ անապատային միահարթ անդորրի մը անսովոր համեմատութիւնները կ'առնէր, հազիւ երբեմն վրդովուած պատահական յամառ գործաւորի մը սայլին խուլ ճոխչէն կամ շոգեկառքի մը հեռաւոր թաւալումին չոր դաժան ժխորէն, — թուլացած էութեանս ալքերուն մէջ ինքնիրեն աճող տենչ մը շարժիլ կուտար զիս: Հոգիս մէջ, անհորիզոն ձանձրոյթիս յաւիտենական տիւրն մէջ, ցօղ մը կ'այրէ՛ր՝ գերագոյն ժպիտով մ'աղուասպիտակ աղուանշոյլ. — ծովու կարօտս էր ան, ծածկայուն՝ (latent) ինչպէս է ամէն գեղեցիկ

բան, բո՛ւռն ու տարտամ միանգամայն՝ ինչպէս չպիտի ըլլար ո՛չ մէկ տենչ: Ու կը զգայի թէ, ամէն մէկ քայլիս, որքան ալ կ'իյնայ ըլլար, անդիմադրելիօրէն՝ գրեթէ գետի մը երանանդո՛րր ստրկութեամբ, ծովուն կը մօտենայի... Բոլոր կնճռոտ, խորտուրորտ, երկար, զիրար խաչաձեւող ճամբաներուն մէջ, որոշած կ'ըլլայի միայն զա՛յն — ծովուն ճամբան: Ու թէեւ նայուածքս, գեղեցիկ բաներու խուզարկումիս լո՛ւռ յուսահատութեան մէջ՝ ներամփոփ կ'ըլլար ու երեւոյթապէս անգործ, հեռուէն, սաղարթախիտ ծառերուն մէջէն, որոշած կ'ըլլայի արդէն ծովու ժպտուն արծաթ պատառիկներ, ինչպէս ապակիի կտորներ՝ կապոյտ մառախուղին մէջ: Ու ինքնիրեն՝ յուշիկ գործող սա մտածումը թէ այդ «ապակիի կտորները»՝ աշխարհը երկրորդ անգամ ապրեցնող անթարթ աչք մը կը մատնէին, վա՛րը, ժայռերու փապարներուն անայլայլ լուքին տակ, զմիխտերանք կանանչախուր հովիտներուն ծոցը կամ, անդի՛ն, հսկայ նարտի զարերու պէս իրարու վրայ հեծած քառակուսի խիտ քարաշէնքերուն ոտքը, — թէ՛ այդ արծաթ պատառները՝ մեր երկրային տխուր տեսողութենէն զատ ու անկէ շատ վեր՝ իրերը կրկնակի ներկայացնող անաշխարհային գեղեցկութեան մը հայելին կը պարզէին հեռուն, առանձին մշտագործն արուեստ մը՝ մեր աչքին մէջ տափափօրէն ներկայ աշխարհը իր վրայ ու իր մէջ նախանձելի, անգամ մըն ալ կամենալի՝ տենչալի դարձնող, մշտազուարթ յաւիտենութեան մը անբովանդակելի կամքը՝ որուն համար չլջանակի զո՛ւր կեղծիք մը՝ յարասպառ յարամա՛շ բովանդագծումի թշուա՛ռ ճիգ մը ըլլային միայն սա լեռներու կոհակային շարքը ու իմ խեղճ անձնականութիւնս իր բոլոր ապրելու ու սիրելու խանդովը ու ամէն բան որ անհատական անշատ ստուեր մը կը ձգէ վայրկեան մը հարթ հողին վրայ. — այս մտածումը, իր եղբարկանութեան մէջ տարտամ դեռ, ծառերուն տերեւուտքին մէջէն ժպտող ծովու պատառներուն ամէն մէկուն վրայ թառ, կը չեղո՛ւ:

(*) Այս խորագրին տակ՝ պարբերաբար պիտի ներկայացուի հատուածներու շարք մը, Մասիի գրչի ընթերցողներուն:

քացնէր պահ մը բոլոր երկրային զգայութիւններս: Մինակ ոտնաձայնս կը լսէի ճախճախուտքին վրայ ու ոտնաձայնիս մէջ հնչող ծովու կարօտս...

Մերթ կ'ըլլար որ, դաշտերու ճամբուն տեղ, քաղաքին ճամբան կ'ընտրէի, դէպի ծովափ յառաջանալու նոյն այս խուլ տենչով: Այն ատեն, չրջապատուած խանութպան մարդոցմէ ու անոնց աշխատութեան ձայներէն, աւելի որոշ կը վերլուծէի իմ տենչիս իսկութիւնը: Կը զգայի, աւելի՛ յստակօրէն, թէ պատահական անպատրաստ տենչ մը չէր ան, ո՛չ ալ պարապուրդէ մը առթուած մասնաւոր ֆիզիքական հարկ մը, յանկարծական քմայք մը, կամ, իմ մտածումէս անկախաբար, զիս՝ իր մթին տափակ անիմաստ գործունէութեան քաշող խեղճ դիպուած մը որ անորոշ անտարբեր անարահետ թափառողի մը երկու քայլին մէջ կը փթթի՝ վայրի անբոյր անտպաւորիչ ծաղիկի մը պէս: Իմ տենչիս պարագան, ծովը տեսնելու՝ ծովուն կեանքը իսկ և իսկ ապրելու մարմաջս իմ մտածումիս բնութենէն կը յառնէր: Կերպով մը, որչափ ատեն որ պէտք պիտի ըլլար մտածել, ծովը ու անոր արտայայտութիւնը — անհունը — իմ մտածումիս, իմ՝ յաւերժութեան ու գեղեցկութեան եղբրական զալարուն կամքիս հաւատարիմ մթնոլորտը պիտի ըլլար: Երբեք ցրտին երանգաթափ աշխարհը երկրորդ անգամ գեղազօր ապրեցնել՝ անըջաստեղծել ուզող արուեստիս անսկիզբ անպատճառաբանելի խանդը... Այնչափ իրմով նախապաշարուած էի, որ, դեռ ծովուն չմօտեցած, կ'երեւակայէի թէ իր մակերեսին տեսիլները մէկէ աւելի առնչութիւններ պէ՛տք էր ունենային իմ՝ արուեստագէտի անձկայրեաց կամքիս հետ, ու դիւրաւ կրնայի տեսողութեանս տակ բերել ծովուն բոլոր նախանձելի ցոլացումները՝ անոնց համապատասխան խեղճ իրերուն հետ դէմ առ դէմ: Կրնայի տեսլաներկայել — թէեւ ծովը հեռուն ըլլար միշտ, ծաւերու ու հաստ չլնբերու ետին դաժան լիբ կմերկացից բեր-

ձի (berge) մը առած խնկաթորմի աղուանչոյլ փայփայանքը, գերանկարչային փափկութիւնը՝ ծովուն մակերեսն ի վար, կանանչաթուխ աննիւթական գաղպէնի հսկայ բարախուն զանգուածքի մը բոլոր լուսեղէն հեռանուաղ քաղցրութիւններով. — կամ աւաղին գիրկը, երկու ժայռի մէջ մոռցուած, խարխուլ մոխրագոյն հիւղակի մը՝ ջուրին արծաթ թաւիչին վրայ առած երանելի երկրորդ կեանքը — անգիտակից հպարտութիւնը թշուառ չքոտի բոպիկ դալկահար հիւղաբնակին — ուր տանիքին քիւերն՝ ոսկի՛, պատուհաններն՝ արծաթ, ու դուռն ու բոլոր չորաբեկ արեւամաշ տախտակներն երանելի անդէ՛ական գոյներու բոլոր անսպառելի գրգռանքը պիտի ծորէին. ուր՝ իր կեանքն ուրանալու խոնարհող, ուր՝ իր ծիծաղն հեղուկ վիհերուն մէջ մոռցող կմախտիպ՝ գրեթէ անստուգ՝ անբարբառ հէք հիւղակն ամբողջ, ամէն մէկ ալիքին մէջ որ կուգայ համարելու իր կմախքը ու գայն կենդանորոգ կենդանեւրանգ ցոլացնել, փառարանութիւնը կ'ըլլայ անփառաբանելի աննախանձելի կեանքին, փառաբանութիւնը կրկնուած՝ աւազի հատիկներուն չափ:

Յետոյ, իրերը գեղեցիկ արտաբերելու, զանոնք միշտ նախանձելի, միշտ երանելի՝ կրկնէացնելու այս գաղտնիքին մէջ ծովուն, «ի յառաջագունէ» արժանիք մը կուտայի իրերուն. և արդէն խիղճս որ իրերուն հետ կը կապուի այնքան որքան մարդկային հուր երազ մը առարկայական ցո՛ւրտ անհունին, ուրիշ բան կրնա՞ր ընել միթէ: Կ'ըսէի թէ ամէն մէկ իր որ պատկեր մը կ'առնէ ծովուն մէջ, արժանի է այդ պատկերին որուն վրայ կը հիանայ բանաստեղծը. թէ՛ ծովը միա՛յն չընաղ, երկրի վրայ անդուգական «առիթ» մըն էր դուրս բերելու համար այդ թաքուն՝ մեր ուղղակի տեսողութեան անծանօթ արժանիքը: Ճիշդ ինչպէս որ ամէն մարդ արժանի է իր խիղճին նիւթին մէջ վայելած երազին զօր, իրերու իր անձին չատներյատուկ՝ իր անձէն անբաժանելի բանի մը մտահոգութիւնս, չի՛ վարսնիր ալ

պատմել ուրիշներու, եթէ կրնայ, քանի որ իր երազը պիտի յայտնէր միայն, ամէն պարագայի մէջ ալ, իր մտքին կարողութիւններուն աստիճանը, իր զգայական աշխարհին համապատասխան՝ աղօտ այլ ճիշդ արձագանգը, իր արարքներուն թողած յաւիտենական հունչը՝ հետեւապէս նստել իր ճշմարտութեան՝ իր արտայայտումին բացարձակ կամքը. ու գիշերը՝ հանգիստի պահը միայն առիթը պիտի բլլար իր երազին, իր անձին յամր արտաբերումին, և ո՛չ թէ զայն ինքնօրինաբար նիւթողը, կանխակալ մատր անոր ստեղծումին։ Ծովը ինծի կ'երեւնար իրրեւ հանգիստոր այն բաներուն որոնք ցաւի գիծ մը ունին կամ որոնք կը ցաւցնեն՝ կը վիրաւորեն մեր տեսողութիւնը. ամէն բանի մէջ պահուած այն բարի վայրի նիւր, այն երանգաձօխ բեղմնաւոր խաւարը որ գեղեցկութեան վրայ կ'երազէ, որ սէր կը հծծէ, յաւիտենութիւն կ'առծծէ։ Ծովը ինծի կ'երեւնար իրրեւ ցօղր յաւիտենական առտուան մը որ չի ճանչնար միջօրէններուն թախծոտ մեղկ ծուլանքը ու իրիկուններուն սարսուռն երկրաւորները՝ զղջումի քրտնաթոր տագնապներով ու հեծկտուն վարանումներով՝ կեանքին առջեւ. — ցօղր որ աշխարհն իր մէջ իրրեւ անստղիւտ մարգրիտ կը համադրէ, որ կը ներէ բոլոր տգեղ թերի ու խոնջ՝ յոգնամալ արտայայտուող բաներուն ու այն պիտի անակնկալ խանդոտ՝ պոպոզանքներով՝ կամանորոգ կամազօր փողփողումներով կը լրացնէ՝ կը ներդաշնակէ զանոնք իր մէջ. այնպիսի սխրալի դողդոջանքներով, այնպիսի երանաւէտ հեւանքներով չնչել կուտայ անոնց խոնջնքն ու տխրութիւնը իր արգիւն խաղաղութեան մէջ, որ պիտի կարծէիր, արցունքով մը պիտի հաւատայիր թէ ստեղծումի առաջին վայրկեանը գեռ նոր կը հնչէ, միշտ նոր կը հնչէ։

... Երբ գործաւորներու, ձեռարհնատաւորներու մթին թաղերէն կ'անցնէի, մուրճի ձայներու, սղոցի սո՛ւր ճօխնչներու, կառքի թաւալումներու մէջէն, — ա՛լ աւելի կը խայ-

տայի ծովուն մտածումովը, Հակադրութեան մոլեգին հեշտանք մը կ'ոգեւորէր զիս... — Աշխարհն որ կը վիրաւորէ, կը թարչամեցնէ, որ հուսկ ուրեմն ինքն իր մէջ կծկուիլ՝ յոգնամալ փակուիլ կուտայ աչքն ու խիղճը, որ հողին հետ կը հարթեցնէ՝ կը հերքէ ամէն անձնական հպարտութիւն, ամէն մարդկային երազ, ու աշխարհն որ ծովուն մէջ, ծովուն վրայ, որ ծովն ի վար ծովէն անդին, անեզրութեան վայելքին չափ, կը լուացուի, կը մաքրուի, ցիւնջ կը թրթռայ անդադար, աւելի վճիտ աւելի խնդուն քան ճիւղաճաճուող մարդկութիւնը՝ տատրակներուն՝ կարապներուն, աւելի սուրբ աւելի նրբին քան չնորհքը խնկաթորմի խնկամալ կամարներուն, — այս հակադրութիւնը, երկաւր անյիշատակ ատեններ պահուած համր տառապանքիս մէջ, յանկարծ կը յառնէր հիմա այս մթին թաղերուն մէջ, ու, միշտ լուռ խոշտանգուած կամքի մը զարթոնքին պէս, կը խօսէ՛ր կը խօսէ՛ր ինձ բոլոր այս մուրճի ձայներով ու սղոցի սո՛ւր ճօխնչներով. կը խօսէր մերթ բուռն մերթ կամաց, անոնց համաժխտրին աստիճանով։ Ու կը սիրէի, պուտ պուտ կը վայելէի տառապանքն յաւիտեան պարփակուած այդ հակադրութեան մէջ. ագահօրէն կ'ըմպէի իր դառնութիւնը, համրուած համրուած ումպերով, աւելի՛ ապրելու համար ծովն իր բոլոր գեղեցկութեան՝ գեղեցկացումի գաղտնիքներով, իր բոլոր զուարթութեան կամքով, աշխարհին երեւոյթն յաւերժացնելու՝ փառաբանելու իր բոլոր լուսեղէն համբերատարութեամբն ու անթափ հսկայ հսկումովը, իր համընդունող ներդրութեան բոլոր անխոցելի կոյս յաւիտենական հպարտութեամբը... Ու անոր համար կը յամէի ճամբուն վրայ... Մերթ կ'ըլլար որ նոյն իսկ, եթէ ամօթը չկասեցնէր զիս, կ'ուզէի տարուիլ շուկայիկ անցորդի մը կամ պարզ չրջուն վաճառողի մը հետ խօսակցելու յանդգնութեան, երեւոյթապէս չա՛տ տարական ռամիկ խօսակցութեամբ մը, ինչպէս որ պիտի վայլէր, անուղղակի ակնարկութիւններ ընելով ծովուն, աւելի՛ շեշ-

ուռած տեսնելու համար խօսակցիս բոլոր
ընտանի՝ խեղճութիւնները, հետազօտելու
համար անոր անգիտակից տխրութեան գու-
նաթափ այլ գոհ ներաշխարհը, անոր մտքին
մէջ ըստ բաղդին ապրող տգէտի ցուրտ
խմբուած իրերը, առանց արուեստի,
միայն ապրելու միջակ կամքով մը ջնարակ-
ուած: Ու բոլոր այս կանգ առնելու, ճամ-
բուս վրայ դանդաղելու միա՛միտ հեշտօրէն
ընացուած միջոցները անո՛ր համար, որովհե-
տեւ գիտէի անոնցմով աւելի թափանցել,
աւելի՛ առկայել աշխարհին ու ծովուն կազ-
մած հակապատկերին դէմ այս ընդարձակ
վայելքս: Ահ, այդ անգութ վայելքս, ու-
րուն մէջ ծովուն՝ մշտակայ առոյգութեան
ընդհն ու անճառ բոյրը կար՝ գործատունե-
րէն վեր ծառացող սեւ մուխին հետ. անհզ-
րութեան լուսեղէն տեսիլները փառաբանող
հովային ոսկեհեղուկ չի՛լ ծնծղաներ, երկու
միջ ալիքի մէջ գոգաւորուած կանանչ մու-
թէն յառնող խռռջային բանդագուշական
կծաղներ, վայրենազմա՛յլ աղաղակներ բո-
լոր այս մուրճի դաժան հարուածներուն հետ
որոնք ներդաշնակ կատարեալ (fini) առար-
կայի մը ձեւը կ'երազեն ու կ'երգեն ու բո-
լոր այս շուկայիկ անհաւասար ժխորներուն
հետ որոնք մահու չափ լուրջ են իսկապէս
ու չեն կրնար թեթեւօրէն ծիծաղի՛լ կատա-
կաբանել անցնող կեանքին հետ, խուսափող
ժամանակին հետ:

... Ծովուն հասնելու մարմաջովս՝ հե-
ռուն, ծովուն հեռազգայութեամբս արբչիւ ,
տակաւին չանցած հետզհետէ պզտիկցող ու
ցանցառացող խանութներու յետին թշուառ
մէկ շարքն ալ, երբ տարտամօրէն կ'անձկայի
գտնել խօսակից մը — թո՛ղ ըլլար ան յետին
այլ բնականոն ռափկը — ու մտիկ ընել
զե՛ռ գործի չիփթ աղմուկները, անոր հա-
մար էր որ կը կարեկցէի բոլոր ատոր, դէպի
ծովուն ղուարթութեան արշաւողի թափիս
տակ պարզուող կեանքի խեղճ բեկորին,
անոր համար էր որ այդ ընդժարչ տխուր
հեռի հեռ ռամիկ կեանքն իր աղօտ ցրտին
խրնով աւելի կը ցցուեցնէր իմ մէջս ծո-
վուն հրապոյրը, աւելի զհտէր քնարերգեւ

տալ իմ կարօտս ու աւելի հեշտին վստա-
հեցնել ինձ իմ սպասած ներաշխարհս, ինչպէս
սե՛ւ շրջանակ մը աւելի կը ցայտեցնէ նկա-
րին զօրութիւնը կամ, բարոյապէս խօսելու
համար, ինչպէս Մազթաղինէին քով աւելի
գիտէ՛ արտայայտուիլ Յիսուսի Մայրը...
Բայց մանաւանդ անո՛ր համար կը դանդա-
ղէի ճամբուս վրայ, անոր համար, ծովուն
հասնելէ առաջ, կը սիրէի ունկնդրել շու-
կային ու մութ թաղերուն ոգիին, որովհե-
տեւ, չա՛տ մասնաւոր անկեղծութեամբ մը,
երեւոյթական կը գտնէի միայն հակապատ-
կերը որ կար ծովուն չքնաղ ցոլացումներու
աշխարհին ու ռամիկ հոգիներուն մէջ ցոլա-
ցող բիրտ անհամբոյր անհամբուրելի աշ-
խարհին միջեւ. — վստ զի եթէ ծովը ան-
թիւ անգամներ, յաւիտենօրէն, կը փառա-
բանէր իր ցոլացումներով՝ այն հողը որուն
վրայ կ'ապրի մարդը, եթէ ծովը միեւնոյն
աւաղելի իրն էր որ տենչալի ու յաւիտե-
նօրէն ապրելի՝ զգայելի կը դարձնէր մեր
աչքին ու մեր խիղճին առջեւ, բնականոն
ռամիկն ալ — այն հանդարտ պայծառ ոգին
որ շուկան ու տունը կը վարէ, այն անդի-
տակից հեշտին կամքը որ կ'օրրէ ու կը
քաղցրացնէ կեանքին ունայնութիւնը, ինչ-
պէս ալիքները կ'օրրեն ու մե՛ղր կը նկրտին
դարձնել շաղիղի բեկոր մը — այո՛, այդ
խեղճ էակն ալ, անսկզբօրէն յայտնուող իր
անմիջական չե՛ղտ լաւատեսութեամբ, յա-
ւիտենապէ՛ս կրկնուած տեսնել պիտի ուզէր
իր կեանքը իր միեւնոյն անձկութիւններով,
իր միեւնոյն տենչերով: Կամքը իր մէջ,
գիտակից թէ անգիտակից, ծովուն ղուար-
թութիւնը, անոր պարագծած երկինքներուն
անհունութիւնը ունէ՛ր:

Ու երբ մօտեցած կ'ըլլայի ծովուն, ինձ
կը թուէր թէ կը լսէի դեռ ետիս հեռաւոր
շուկային աղմուկները, մութ ու նեղ թա-
ղերուն չիփթ ընդժարչ կենսականութիւնը,
ու մուրճի հարուածները՝ երազի չափ խու՛-
բայց դեռ միշտ զգայելի՛ ականջիս:

ԵՊՈՒՍԲՐԳ ԳՕԼԱՆՃՅԱՆ

ԼՈՒՍՆԱՅԻՆ ՊԱՅԾԱՌՈՒԹՅՈՒՆ

Ա՛լ տարածելով լուսինը իրեն նըշոյլն ըսպիտակ,
Կը ճերմըկցընէ բնակարանի տանիքներն հեռուն,
Այս իրկուն իր հեշտ պայծառութիւնն ալ փափուկ ու յստակ,
Կը թաւշերանգէ խիտ գազաթները սա.կաղնիներուն:

Թաւշերանգելով խիտ գազաթները այս կաղնիներուն,
Թուխ ոստերուն մէջ ժըպտուն ճաճանջ մը արդ. կը սողոսկի,
Ու կրնաս դիտել թէ մըսկոտութեամբ հիմայ սարսըռուն,
Ա՛լ կը դողդըղան սա մացառները հանդարտ, մեղմակի:

Ու դողդըղալով այս մացառները հանդարտ, մեղմակի,
Կը ծածանին հոն աղդեցութեան տակ իրիկուան հովին,
Եթէ թոյլ տրուի նոյն իսկ շուշան մը դետին կը հակի,
Այնքան այս պահուս գիշերն է. կարծես հանդարտ ու լըռին:

Ու այս վայրկեանիս այս գիշերուան մէջ հանդարտ ու լըռին,
Գարունը մեղմիկ կը պտըտցընէ մէկ հանդարտ բուրվառ,
Խնկաւէտելով օդը երազով, յոյսով մը խորին,
Չափազանց սաստիկ, չափազանց ցընցող բոյրով սիրավառ:

Չափազանց սաստիկ, չափազանց ցընցող բոյրը սիրավառ,
Ա՛լ կը բարձրանայ թուխ տերեւներուն միջեւ երերուն,
Եւ ճառագայթ մը կարծես կը խայտայ հիմայ թուլարար,
Թաւշերանգելով խիտ գազաթները այս կաղնիներուն:

Թաւշերանգելով խիտ գազաթները այս կաղնիներուն,
Այս իրկուն, իր հեշտ պայծառութիւնն ալ փափուկ յըստակ,
Կը ճերմըկցընէ բնակարանի տանիքներն հեռուն,
Ա՛լ տարածելով լուսինը իրեն նըշոյլ ըսպիտակ...

Թարգմ. ՅԱԿՈԲ ԶՕԼՕԼԵԱՆ

ՏԻԿԻՆ ԷՏՄՕՆ ՌՈՒԹԱՆ

ՀԱՅԵԼԻՆ

(ԿՈՅՐԻ ՄԸ ՆԱՍԱԿՆԵՐԸ)

(Լ.Է.ՕՆ Լ.Է.ՍԵԼԷ)

Ա. ՆԱՍԱԿ

Կը փափաքիս որ գրեմ քեզ, սիրելիդ իմ Անայիս, ես, խեղճ արարած մը որուն ձեռքերը խարխափելով կը շարժին մութին մէջ, Նամակներու տխրութենէն չեմ վախ- նար, իբր թէ մթութեան մէջ գրուած ըլ- լային: Վախ չունիմ լուրջ խորհուրդներէն որոնք կոյրը կը պատեն:

Սիրելի Անայիս, երջանիկ ես դուն, վասն զի կրնաս տեսնել: Տեսնել, ո՛հ, տեսնել, կարող ըլլալ որոշելու կապոյտ երկինքը, արեւը և բոլոր տարբեր գոյները — ինչ ուրախութիւն: Իրօք, երբեմն ես ալ կը վայելէի այս առաւելութիւնը, բայց երբ կուրութեամբ զարնուեցայ, հազիւ տասը տարեկան էի: Հիմա քսանընիւթ տա- րեկան եմ: Տասնընիւթ երկար տարիներէ ի վեր է որ շուրջս ամէն բան գիշերուան պէս սեւ եղաւ: Ի զո՛ւր, սիրելի բարե- կամս, կը ջանամ բնութեան զարմանալիք- ները վերլուծել: Իր բոլոր գոյները մոռցած եմ: Կը հոտուրտամ վարդին բոյրը, շօշա- փելիքովս կը ճանչնամ ձեւը, բայց իր չքեղ գոյնը, որուն հետ կը բաղդատուին բոլոր գեղանի կիները, մոռցած եմ ես: Մերթ այս թանձր մթութեան քօղին տակ տարօ- րինակ ճառագայթներ կը թափանցեն: Իժիկները կ'ըսեն թէ ասիկա արեան շար- ժումն է, թէ բժշկուելու քիչ մը յոյս կայ ինձ համար: Սի՛ն պատրանք: Երբ մէկը տասնընիւթ տարի կորսնցուցած է աշխարհը գեղեցկացնող լոյսը, ան երբեք չպիտի գտնէ վերստին իր լոյսը:

Անցեալ որ նուրբ զգացողութիւն մը ու- նեցայ: Սենեակիս մէջ խարխափած ատենս, ձեռքս դրի, — ո՛հ, երբեք պիտի չկրնայիր կռահել — հայելիի մը վրայ: Դէ՛մը նստայ, և պըռուհիի մը պէս մազերս յարդարեցի:

Որչա՛փ կը փափաքէի ինքզինքս դիտելու կարող ըլլալ, հասկնալ թէ գեղեցիկ եմ արդեօք, մորթս այնչափ ճերմա՞կ է որքան կակուղ, և թէ սիրուն աչքեր ունի՞մ եր- կայն արտեւանունքներու տակ: Ա՛հ, դըպ- րոցը յաճախ կ'ըսէին թէ հայելիին մէջ ոգի կուգայ ինքզինքնին երկար ատեն դիտող աղջնակներուն: Եթէ իմինիս մէջ եկաւ ան, չկրցայ տեսնել զին՛քը:

Սիրուն նամակիդ մէջ կը հարցնես ինձ թէ ճշմարիտ է որ սեղանաւորի մը անյա- ջողութիւնը վնասած է ծնողքիս: Այդ տե- օակ բան մը լսած չեմ: Ո՛չ, իմ ծնողքս հարուստ են: Ես ճոխութեամբ կ'ապրիմ: Չեղքս հանգչած տեղը մետաքսի և թաւիչի կը հանդիպի, ծաղիկներու ինչպէս նաեւ թանկագին նիւթերու: Մեր սեղանը ճոխ է, և ամէն օր ախորժակս համանդամներով կը շողմուռի: Ուստի, սիրելի Անայիս, կը տեսնես որ իմիններս երջանիկ են:

Դրէ ինձի, սիրելիս, և քիչ մը գութ ունեցիր խեղճ կոյր բարեկամուհիիդ վրայ:

Բ. ՆԱՍԱԿ

Գաղափար չունիս, Անայիս, թէ ի՛նչ պիտի պատմեմ քեզ, Օ՛հ, խենդի պէս պիտի խնդաս: Գուցէ պիտի մոռնաս որ տեսու- դութեանս հետ խելքս ալ կորսնցուցած եմ: Սիրահար մը ունիմ:

Այո՛, բարեկամս, ես, աչազորիկ աղօ ջիկս, սիրահար մը ունիմ, դժուարիներու սիրահարներուն չափ դիրքի տէր և հալումալ: Սէրը որ կոյր է, կ'ըսեն, անտարակոյս աս սիկա ինձի կը պարտի, իբրեւ այս տեսակէն մէկը:

Թէ ինչպէս մեր մէջ գտնուեցաւ այդ ե- րիտասարդը, չեմ գիտեր: Նոյնպէս, թէ ի՛նչ կ'ընէ հոս: Միայն սա կրնամ ըսել թէ անցեալ օր ճաշի ատեն ձախ կողմս նստաւ, և զղացի որ իմ ետեւէս չափազանց ուշա- դուրութեամբ և հոգւով կը նայէր:

— Առաջին անգամն է, ըսի, որ ձեզի հանդիպելու պատիւը ունեցայ:

— Իրօք, պատասխանեց, սակայն ծնողք- նիդ կը ճանչնամ:

— Բարի եկաք, ըսի, քանի որ գիտէք զանոնք պատուել:

— Միայն անոնք չեն որ, յարեց մեղմիւ, կը սիրեմ:

— Օ՛, պատասխանեցի, ուրեմն հոս ուրիշ զո՞վ կը սիրէք:

— Ձե՛զ, ըսաւ:

— Ձի՞ս, ի՞նչ ըսել կ'ուզէք:

— Թէ կը սիրեմ զձեզ:

— Ձի՞ս, զիս կը սիրէ՞ք:

— Իրապէս, բոլոր սրտովս:

Այս խօսքերուն վրայ շիկնեցայ ես, ու վզնոցս ուսերուս վրայ քաշեցի: Բոլորովին լուռ նստաւ ան:

— Դուք ձեր յայտնութեանը մէջ շուտափոյթ էք:

— Օ՛, կրնայ տեսնուիլ նայուածքներուս, շարժուածքներուս և բոլոր գործերուս մէջ:

— Ատիկա կրնայ ըլլալ, բայց ես կոյր եմ: Կոյր աղջիկ մը ուրիշներուն պէս չի դարպասուիր:

— Ի՛նչ, հո՞գդ է տեսողութեան պէտք ունենալդ, ըսաւ ան, անկեղծութեան հասնելի չե՞լաւ մը. ի՛նչ փոյթ ինծի թէ քու ալքերդ լոյսին գոցուած են: Կերպարանդ հրապուրիչ չէ՞, քալուածքդ սէգ, խոպուիքներդ երկար ու մետաքսային, և ձեռքդ շուշանի գոյն:

Իր նկարագրութիւնը լմնցուցած էր, բառերը ականջիս մէջ հնչելէ առաջ: Ուրեմն, իր ըսածին նայելով, ես ունէի գեղեցիկ դէմք մը, աղուոր ոտքեր, վարդափայլ մորթ մը, և նուրբ մետաքսանման վարսեր: Ո՛հ, Անայիս, սիրելի Անայիս, ուրիշ աղջիկներու համար՝ այսպիսի սիրահար մը որ բոլոր կատարելութիւններդ կը նկարագրէ, ուրիշ բան չէ այլ աղերսարկու մը. բայց կոյր աղջկան մը համար՝ սիրահարէ աւելի բան մը, հայելի մըն է:

Դարձեալ սկսայ ես:

— Իրօք ես այդ բոլորին պէս գեղեցիկ եմ:

— Ես դեռ իրականութենէն հեռու եմ:

— Ի՛նչ կ'ուզէիր ընել զիս:

— Կ'ուզեմ քեզ կինս ընել:

Այս գաղափարին վրայ, բարձրաձայն խնդացի:

— Իրօք ատանկ է, գոչեցի, ամուսնութիւն մը կոյրին և տեսնողին, գիշերուան և ցորեկուան միջեւ: Ո՛չ, ո՛չ, ծնողքս հարուստ են, առանձին կեանքը ինծի համար սոսկում չազդեր, մինակ պիտի մնամ ես, առանց կեանքի ընկերոջ:— Երիտասարդը հեռացաւ, առանց ուրիշ բառ մը արտասանելու: Սորվեցուց ինծի թէ գեղեցիկ եմ: Ձեմ գիտեր ինչէ՞ն է որ կը սիրեմ զինքը, իմ Պրն. հայելիս:

Գ. ՆԱՄԱԿ

Օ՛, սիրելի Անայիս, ի՛նչ լուրեր ունիմ քեզի հաղորդելու: Ի՛նչ տխուր և անակնկալ բաներ կը ներկայանան մեզ այս կեանքին մէջ: Մինչ ինծի պատահածը կը զրեմ քեզի, արցունքները մթնցած աչքերէս կը վազեն:

Նախորդ նամակովս քեզի հաղորդած խօսակցութենէս քանի մը օր ետք, օտարական մարդուն հետ զոր «Իմ հայելիս» կոչեցի, պարտէզը կը պտտէի, մօրս թեւին կրթնած, երբ յանկարծ բարձրաձայն կանչեցին զինքը: Ինծի անանկ թուեցաւ որ կանչողը, մայրս գտնելու փոյթով, ձայնին մէջ յուզում մը կը մատնէր:

— Ի՛նչ կայ արդեօք, մայր, հարցուցի:

— Ոչինչ, սիրելիս, այցելուներ եկած ըլլալու են անտարակոյս: Մեր այս զիրքին մէջ քաղաքավարութիւն կը պահանջէ ընկերութիւնը:

— Այդ պարագային, ըսի, ողջագուրեւ լով զինքը, ասկէ աւելի վար դնել չեմ ուզեր քեզ, գնա և սալօնիդ պատիւները ըրէ հիւրերուդ:

Երկու սառ չրթունքները ձակալիս վրայ դրաւ ան: Յետոյ օտնաձայներ լսեցի: Խճուղիին վրայ հեռաւորութեան մէջ յառաջանալով:

Հազիւ մայրս բաժնուած էր ինձմէ, կարծեցի երկու դրացիներու ձայնը լսել, — երկու

գործաւորներ որոնք իրարու հետ կը շաղա-
կրատէին, ինքզինքնին մինակ զգալով,
Գիտե՛ս, Անայիս, երբ Աստուած մեզ մեր
կարողութիւններէն մէկէն կը զրկէ, կար-
ծես մխիթարելու համար՝ միւսները զօրա-
ւոր կ'ընէ. աւելի սուր է կոյրի մը լսողու-
թիւնը քան անոր որուն տեսողութիւնը
կրնայ միջոցը կտրել: Խօսակցողներուն գի-
տողութեան բառ մը չկորսնցուցի, թէեւ
ցած չեշտով կը խօսէին: Ահա՛ թէ ինչ կ'ը-
սէին. —

— Խեղճ, ախուր բաներ: Պարտապա-
հանջները դարձեալ ներսն են:

— Եւ աղջիկը ամենափոքր կասկած մը
անգամ չունի: Ան չի կռահեր կոր թէ իր
տեսողութեան զրկումէն կ'օգտուն զինքը
երջանիկ ընելու համար:

— Ինչ ըսել կ'ուզես:

— Ըսածիս մասին բնաւ կասկած չկայ:

Օրիորդին ձեռքին հանդպած բոլոր առար-
կաները մահոքենիէ կամ թաւիչէ են: Սե-
ղանին վրայ էն փափուկ կերակուրները կը
վայելէ, առանց երազելու, իր միամտու-
թեանը մէջ, թէ ընտանեկան թշուառու-
թիւնը իրմէն դադարի պահուած է, և թէ
միեւնոյն սեղանին վրայ իր հայրը և մայրը
ուտելու ուրիշ բան չունին բայց միայն
ցամաք հաց:

Ո՛հ, Անայիս, կրնաս հասկնալ տագ-
նապս: Երջանկութեանս համար աշխատած
են ծնողքս, զիս պերճութեամբ ապրեցու-
ցած են մթութեանս մէջ — և միմիայն զիս:
Օ՛հ, հրաշալի անձնուիրութիւն: Երախտա-
գէտ սրտի մը նուիրած բոլոր հարստութիւ-
նը չկրնար փոխարինել այս յաւիտեանեան
պարտականութիւնը:

Չարլմ. Մ. ՅԱԲԱՐԵԱՆ

Պարտիզակ

ԺԱՔՈՆԱԿԱՆ ՍՐՔԵՐԳ

Արշալոյսի առաջին հուրքեր միզը կը պատռեն,
Գաղտակրափայլ ձորին մէջ՝ գամէլիայի հանգունակ,
Մակնուային և կանանչ բամբակներուն մօտ, նորէն,
Ժօնքան կըտաւ կը պարզէ, կ'երփներանգի և ալեակ:

Սիւքին գգուող համբոյրէն սարսըռացող մերկ կուսիկ,
Պըղընձագոյն ճակատն իր կը դարդարէ օղինով,
Ճարոնական վարդերով, տահլեակներով գեղեցիկ,
Եւ կը սուզուի փըշրուող ալիքին մէջ անխռով:

Ոսկեղէն մեծ հայլիի նըմանող փոքր լիճերուն
Մօտ գտնուող կարապներն՝ որոնք կ'առնեն թըռիչքին,
Կը վրդովեն աղօթքը մենաշեացին սրբազին:

Եւ անցնելու ժամանակ ձայնելով միշտ թրթռուն,
Կ'երթան ծակել ապարօն հըրաշդող կիտուածէ,
Որով Ֆուժի հրբառուն իր կատարը կը պատէ:

Ary Renan

Չարլմ. Վ. Մ. ՎԱՌԵԱՆՑ

Մ Ա Ն

ՕՐ . ՄՈՐԻՍՄ ԱԼԼԱՅՎԷՐՏԵԱՆԻ

(ԴՈՒՍՏՐ ԱՐՐԱՅԱՍ ԱՍԻՐԱՅԻ)

Ալլահվէրտեան գերդաստանը խոր սուգով մը համակուեցաւ՝ մահուամբ Օր. Մարիամ Ալլահվէրտեանի, — քոյր Վսեմ. Յովհաննէս էֆ.ի և Մկրտիչ էֆ.ի, — որ իր մահկանացուն կնքեց բարեպաշտ ու առաքինի կեանքով մը, յարգուած բոլոր զինքը ճանչցողներէն: Յուդարկաւորութեան տխուր արարողութիւնը կատարուեցաւ երկուշաբթի առաւօտ, Հայ-Հռոմէականաց Ս. Երրորդութիւն եկեղեցին, ի Բերա, պատկառելի՝ բայց պարզ հանդիսաւորութեամբ, ինչպէս փափագ յայտնած էր հանգուցելոյն Վսեմ. եղբայրը: Առաւօտուն, նոյն եկեղեցւոյ մեծ ժողովրդապետ և հանգուցելոյն խոստովանահայր Տ. Պօղոս Գերապայծառ Դադրիկեան հոգեհանգստեան Պատարագ մատոյց երկու վարդապետներու սպասաւորութեամբ, որմէ վերջ՝ ի ներկայութեան Կ. Պատրիարք Տ. Պօղոս Սապպաղեան Սրբազանի և բազմաթիւ եկեղեցականներու կատարուեցաւ յուդարկաւորութեան տխուր արարողութիւնը: Տաճարը ամբողջ սեւերով պատուած էր ու մէջտեղը, մահաբեմի մը վրայ դրուած էր ընկուզենիէ դազաղը: ջահերով չրկապատուած: Իբր սգակիր կեցած էին դասին մէջ, Վենետիկի ու Վիէնայի Միթիթարեան Միաբանութեանց ներկայացուցիչ վարդապետներ, իսկ վերնատունը՝ Անարատ Յղութեան Գոյրերը, Ս. Աննա Որբանոցին աղքատիկ աղջիկներով որոնց պաշտպանն ու բարերարն էր հանգուցեալ Օր. Մարիամ Ալլահվէրտեան:

Զախախողման դասը, մասնաւոր տեղ մը գրաւած էին Վսեմ. Յովհաննէս էֆ.ի քոյրը՝ Տիկին Սօֆի Թօփուզ ու աղջիկը՝ Տիկին Աննա Մարրեան իր զաւակներովը և Ալլահվէրտեան գերդաստանի բոլոր պարագայք. իսկ Ալլահվէրտեան հարազատները անհանգստութեան պատճառաւ չէին կրցած ներկայ գտնուիլ:

Արարողութիւնը կատարուեցան դաշն ու տխրազգեցիկ ձայնակցութեամբ դպրաց դասուն, որմէ ետք ներկաներն իրենց ցաւակցութիւնն յայտնեցին Վսեմ. Յովհաննէս էֆ.ի փեսաներուն՝ Էտուռա պէյ Մարրեանի և Էտկար պէյ Տիւզեանի և հանգուցեալ Ալլահվէրտեան Գրիգոր էֆ.ի զաւկըներուն՝ Արրահամ, Թէոտոր և Յակոբ էֆ.ներուն:

Յուդարկաւորներուն մէջ կը նշմարուէին Հայ-Հռոմէականաց երեւելիները և մեր ազգայիններէն բազմաթիւ ծանօթ անձնաւորութիւնք. ինչպէս նաեւ պատուաւոր օտարազգիներ, — չետական պաշտօնատարք, առեւտրական ու սեղանաւորական դասի ներկայացուցիչներ, բժիշկներ, փաստաբաններ, գրական մարդիկ, լրագրագետներ եւայլն:

Յաւակցական արտայայտութիւններէն ետք, դազաղը մեռելակիր քառաձի կառքով մը փոխադրուեցաւ Շիրիի գերեզմանատունը ուր ամփոփուեցաւ հանգուցելոյն մարմինը՝ Ալլահվէրտեան գերդաստանի յատուկ դամբարանին մէջ ուր թաղման վերջին կարգը կատարեցին Դադրիկեան Գերապայծառ և Հ. Ներսէս վրդ. Աճեմեան: Յուդարկաւորներու բազմութեան մեծ մասը, իրենց տրամադրութեան ներքեւ զըրուած կառքերով, հետեւեցան դազաղին մինչեւ գերեզմանատուն ուր կրկնեցին իրենց ցաւակցութիւնները Ալլահվէրտեան ընտանեաց անգամներուն:

Հայ և օտարազգի ծանօթ անձնաւորութիւնք ցաւակցական քարղեր ուղղած են Վսեմ. Յովհաննէս էֆ.ի ու եղբորը որոնց՝ ինչպէս նաեւ ամբողջ Ալլահվէրտեան ընտանիքին վայելած համակիր յարգանքը անգամ մը եւս ջերմապէս արտայայտուեցաւ, այս սուգին առթիւ:

Հիմնադիր—Կ. Ս. Իիթի-ձեմաՆ

Տէր եւ ՏԳօրէն—ՏՈՒԹ. ԵԴՈՒԱՐԴ ՍԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐՄԻՆԻԱ Օրագրի

ԱՐՐԱՀԱՄ Կ. ԿՏԱԻՃԵԱՆ

Ի Չ Մ Ի Տ

Կրտսեան

Հոգեկիր եւ ծ. վ. ին ապահովագրութիւններ՝ շահուէտ պայմաններով։
Այլեւ տեսակ գոյիսիօ՞ր գործեր, ներածում, արտածում եւ մօքային գործողութիւններ։
Եւրոպական առօրինակաբար գոյ, ծարաններու միջոցաւ՝ գուծուած եւ պարզ պահներաւ։
Դորդ քառք—բաժնիներու պարտաւճարութիւն։ Ֆորօկրաֆի կամեմատ։

Կրտսեան

«Թաւա Սթրամբ» Անգլ. Տան դրամարկային, էն։
Սաքսոնի, առօրինակաբար բիւրօներ, շարքաւոր զնարումներով։
Այլեւ վերջին դրամարկաբար պիտի ըլլան։
Այլեւ տեսակ երկրագործական եւ թիթեղագործի մեքենաներ։
Ուղղութեամբ քանակաբար եւ տեսակով ընտիր եւ կառուէտ թելեր։
Գուտաւոր լոնձնարարութիւններ փութով կը կատարուին։

4—10

Հանգի

ԱՐՐԱՀԱՄ Կ. ԿՏԱԻՃԵԱՆ ԻՎՈՐ

PHOENIX ASSURANCE Ltd. Co.

“Փ Ի Ն Ի Ք Ս”



ՀԻՄՆԵԱՆ Ի ԼՈՆՏՈՆ 1782 ԻՆ

ՆԵ ԳՈՐԾԻ Ի ՊՈԼԻՍ 1869ԻՆ Ի ՎԵՐ

ԱՆԳԼ. ՈՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագումար եւ պահեստի դրամ

Անգլ. ոսկի 4,218,000

Ֆինիստ առկ հրդեհի դէմ Ապահովագրական Ընկերութիւն մըն է, ծանօթ իր պատուաւորութեամբ եւ փութաւոր մէջ իր անմիջական վճարումներով։

Ֆինիստ կ'ապահովագրէ հրդեհի եւ կաթակի դէմ մէկն տեսակ անարգ եւ շարժուն առարկանք, լոյժ նպատակով պայմաններով։

Ընկերութեան նշանաբանն եղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՑ. Ցաւոք վճարած է առաւել քան 27,000,000 անգլ. անգլ.։

Ընդհ. գործակալ Պալա, եւ գուտաւոր։

Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ
Վերալիս խան, Պանֆ Օրօմանի մօտ
Հայաքիս։

Փոխ գործակալ Ի Պալա
Ճիւղն Թէթեւան

6—10

Ֆեզգիւան խան

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ՌԵՐԱ, ՄԵՐ ՓՈՂՈՑ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին դէմ

Դե. Նե. Շք. օրերը առաւօտեան կանու

խեն մինչեւ իրիկուան ժ. 11½

Բե. Դե. Ուր. օրերը ճեմ մինչեւ 11½

Նիքալի օրերը ժամադրութեամբ 6—10



6-10

6-10

ՆԱԶԱՐԷԹ ԽԱՉԵՐԵԱՆ

ՓԱՍՏԱՐԱՆ

Պոլիս, Մարբունքիար, Պարնաբան խան
Թիւ 26

Այժն կարգի դասեր կը ստանձնէ եւ խնդրոյ առարկայ եղած քործերու համար թէ՛ բերանայի եւ թէ՛ թղթակցութեամբ բանակցութիւններ կը կատարէ եւ կարծիք կը յայտնէ. կը խմբագրէ եւ կը թարգմանէ դասերու եւ առեւտրական ու սովորական պայմանագրութեանց վերաբերող թուղթեր. Ուրբաթ օրերը մինչեւ կէս օր ձգիւ. բար խորհրդակցութիւն կը կատարէ եւ կարծիք կը յայտնէ:

Ապահովագրական գործառնութիւններու եւ ի մասնաւորի կեանքի ապահովագրական ընկերութեանց նկատմամբ տնկրաժեշտ եղող տեղեկութիւնները ձգեալբար կուտայ:

Կը յանձնարարէ որ մինչեւ որ այս մասին հարեւոր եղած տեղեկութիւնները իրմէ հասցուին, ապահովագրութիւն չի ստորագրուի: Ապահովագրական վնասուց հասուցման դուրս տարներու եւ փութարժէքներու գումարմաներ կը ստանձնէ:

3—10

Դ Ե Ր Չ Ա Կ

Վ Ի Չ Ե Ն Ա Լ Ա Ճ Ա Ե Ա Ն

Հայաքիա, Հարանք փողոց. քիւ 13

Հաւ տեսակ կեդպատներով ու ձեւաւոր հագուստ պատրաստել առ ուղղակիք, որոնք միանգամայն ստանութիւն կը փոշուեն եւ վճարման գիւրին պայմաններ, կըրնան գիմել այս նոր բացուած խանութը. եւ մեծապէս դուրս պիտի մնան:

3—10

ԱՆԳՂԻԵՐԵՆԷ-ՆԱԵԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

Բ Բ Օ Ֆ . Վ . Յ . Յ Ա Կ Ո Ր Ե Ա Ն Ի


Ստիւտ-թիւ օրինակներ մնայած են եւ կը ծախին Յ. Մասթէտեան թղթաւոր, Լանսը:

Յիւճանճըլար, Ամերիքան խան թիւ 27 Կ. Պուլիս

Գիւն 60 դրո.

Գաւառաց համար 64 շրշ. բոթարի ծախքով

4—10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Բ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՂԱՏԱՆ

The Singer Manufacturing Gie.

Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՍԻՆԿԵՐԻ
ՄԱՍԿԵՐԻ
ՎԵՐԿԵՐԻ
ՄԱՍԿԵՐԻ
ՎԵՐԿԵՐԻ

- | | | |
|---------|---|--|
| ԲԵՐԱ. | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառշէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝ |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ. | } | 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյաղիա, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԿԻՒՑԱՐ | | Չարը Պօլու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձեռք.

Կասաբեալ երաւաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզդուլուի տունը:

6—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԿՍԻՄ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ-ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտաբար եւ երկար տարիներէ վեր կը դարմանէ զառմաքօի, աղեաց, միզային ճանքաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հին եւ նոր գլխաւոր ախտերը: Այս վերջին ախտերը՝ առանց ստամոքի խոնգումի եւ նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի մօտէն օր կէս օրէ վերջը: Զօրեղանքի օրերը միայն ձրի: 5—10

ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Արանց եւ հոռանց ճաշակաւոր հովանքներու, Պօլիս, Սուլթան—Համամ, Մի. Խիւլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն վաճառատն մէջ գտնուած աղբանքները, արանց ու հոռանց յառուկ հովանքներ, իրենց գեղեցիկութեան կը միացնեն ապուհութիւն, եւ դիւրամտելի գիններու առուելութիւնն ալ՝ հիշեցնեն հասարակութեան:

Սաղմ վարդեան մեծապէս գով թողուցած է իր բաղմութիւ յառաջները: 6—10